

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբարակացիք դիմում են ուղղակի
Tiflisc. Redakcia «Mtsak»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզովով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ալեքսանդրա-
պօլից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Անգլիա: Թիւրքիա: Արտաքին լուրեր:—
ՀԵՌԱՅԻՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ: Խմբագրի Մէլիքովի խմբագրութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

Յուլիսի 28-ին

Անձրեանքը, դով զարնանը յաջորդեց երաշտ
առթաղին ամառը: Սովորականից դուրս չոր և
խեղդուկ է եղանակը: Մի ամբողջ ամիս է, որ
պայակած երկիրը կարօտ է անձրեւի: Բայց չը
նայելով այս երկարատեւ երաշտութեանը, մեր դա-
ւառի պտղաբերութիւնը կարելի է այս տարի մի-
ջակ համարել, ըստ որում այս ամառվայ առաջին
օրերում եկած յորդառատ անձրեւները ազատեցին
արտերը բոլորովին արեակէջ լինելուց:

Ամառ է, բայց երկարագործը դո՛ւ չէ և ուրախ իր
վարուցանքով, ըստ որում նա չէ տեսնում իր
քրտնաթոր աշխատանքը կատարելապէս վարձա-
տրված բնութիւնից... Ամառ է և մեր քաղաքի
անտառների թողն չափ ու սահման չը կայ: Անձրե-
ւային տարիներում մենք չենք ազատվում թողի
ձեռքից, որ թէ այսպիսի տարիներում, երբ ա-
միսներով սպասում ենք անձրեւի: Մեղանում չը
է այս սովորութիւն փողոցները քրելու, թէկուզ ան-

տանի թողն ու փռնի քրտնաքնէր մեր աչքերը:
Մեր փողոցները զօրկ են ծառաւորներից, իսկ
ծառերը, ամառնային տապ օրերում քիչ չեն
նպաստում օդի զովութեան և մաքրութեան, իսկ
զով, մաքուր օդի ներշնչութիւնը, ակնհայտ է թէ
որքան բարեբար ներգործութիւն ունի մարդու
կազմուածքի վրա: Համարեմ է մի քանի անգամ
եղած են հարեանքի, թող փորձեր ծառեր տնկել
փողոցներում, բայց ի զօր: Մէկ էլ տեսար, ան-
ցան հարած, այս կամ այն փողոցով մեր հաշա-
կաւոր կինտանները և «էջ ետ», «էջ ետ...» կան-
չելով, պոկելին, արմատախիլ արին նորատունկ
ծառերն ու անցան: Տղէտ և վայրենի բնութեան
թեանտէր մարդիկ շատ անգամ գտնում են զուար-
ճութիւն աւերելու և քանդելու մէջ: Լաւ էր
լինէր, որ տեղական պոլիցիան և մեր քաղաքա-
յին գործող զեկաւարները, աչքի առաջ ունե-
նալով մեր քաղաքի առողջապահական պայման-
ները, կարգադրութիւն անէին՝ փողոցները ցո զե-
լու և ծառեր տնկելու: Սրանք էլ պակաս կարելի-
ներ չեն, որոնք էլ առողջապահական հարկաւոր
կարիքներ են քաղաքի համար:

Ամառ է և «կարմուկ» ցաւը բաւականին դո-
հեր է տանում մանուկներին: Փաղաքում տիրում է
անտանկի պարապութիւն: Փողոցները ստացել
են կիսաթափուր կերպարանք: Երկարագործը դադա-
րված է իր հնձով, իր կալ ու կասով, ռուսումնա-
բանների արձակուրդների միջոցն է: Եւստ մար-
դիկ հեռացել են քաղաքից կամ օգափոխութեան
համար կամ գործով: Առևտուրի ամենաընկած մի-
ջոցն է և վաճառականների տրտունջը ականջ է
խլացնում դարձեալ: Եւ յիշաւի, Ալեքսանդրապօ-

լի վաճառականութիւնը երբէք զրկած չէ եղել
յաջողակ և յառաջդիմական պայմանների մէջ,
բայց բացառական դէպքերում, զօր. պատերազ-
մի տարիներում: Երեւակայեցէք ձեզ մի գաւառ,
որի բոլոր արդիւնաբերութիւնը բաղկանում է
ցորենից և գարուց, իսկ երաշտ տարիներում
պէտք է ձեռք քաշել նախ բերքերից: Եւ երեւա-
կայեցէք, որ մեր գաւառի ոչ մի զիւղ ազատ չէ
մի կամ երկու մանրավաճառներից, որ ամեն կող-
մից թափվում են այստեղ, հրէայ մանրավաճառ-
ներ, որոնք դատարկում են անդադար մեր երկրա-
դործի առանց այն էլ դատարկ զրպանը: Երեւակա-
յեցէք, ի վերջոյ, մի քաղաք, որ չունի ոչ մի
գործարան, ոչ մի արհեստանոց, որի առաջին և
վերջին պարագմունքը կայանում է միայն առև-
տրական գործունէութեան մէջ, ուր ստիպված են
կամ լինել վաճառական, կամ պարագլ մանրա-
վաճառութեամբ: Աչքի սուսը ունեցէք և այս-
տեղի անապատում, վաղածամ ամուսնութեան տո-
վորութիւնը, որի արգասիքն է բազմամանու-
թիւնը և այն նախապաշարմունքը, որ վաճառա-
կանի տղերքը չարունակելու են իրանց հօր պա-
րագլունքը, որպէս մի տոհմային արտօնութիւն:
Հաշուեցէք, որ մեզանում իւրաքանչիւր վաճա-
ռականական գերդաստան ունի երկու, երեք,
չափ անգամ չորս, հինգ կրպակներ: Նայեցէք,
մի անգամ, այս կրպակների բազմաթիւ շարքերի
վրա և կըմբռնէք իսկոյն թէ՛ որքան անմիտ և
անմեղ է մեր վաճառականների յայտնած տրտու-
նը առևտուր չը լինելու վերաբերութեամբ: Վա-
ճառականական այսպիսի աննպաստ և տարա-
պայման հանգամանքների մէջ, ի հարկէ աջողակ

կարող են լինել 10-ը կամ 20-ը վաճառականնե-
րից և ոչ 100-ը կամ 200-ը: Ամբողջ քաղաքով
դարձել են ծախողներ, յետոյ էլ դանդաղում են
որ առնող քիչ կայ...

Հաստատ արդիւրից տեղեկանում ենք, որ մեր
թաղապետական ժողովը պէտք է բացառութիւն
ստանայ այն խնդրագրի առիթով, որով նա խըն-
դրում էր, օրանից հինգ ամիս առաջ, երեւանի
պ. նահանգապետից թողաւութիւն: Ալեքսանդրա-
պօլում «մի քաղաքային հասարակաց ընթեր-
ցարան» բանալու: Մեզ համար շատ ցանկալի է,
որ այս լուրը չը ստուգվէր, բայց տարաբարա-
բար այս լուրի ճշգրտութեանը կասկածելու առիթ
չունենք: Այժմ ակնհայտ է, որ մասնաւոր
անձինք պէտք է յանձնառու լինեն կատա-
րելու այն, ինչ բացառում են մի քաղաքի: Բայց
հարցը սրանումն է թէ՛ յանձնառու կը լինի ար-
դեօք և կան մեղանում այնպիսի անձինք, որոնք,
լինեն նիւթապէս այնքան ապահով, իսկ մտաւո-
րապէս այնքան զարգացած և ժողովրդական, որ
ձեռնամուխ լինէին հասարակաց ընթերցարանի
սկզբնաւորութեան գործին և որոնք չը նայելով
իրանց կրած նիւթական վնասներին, տոկուն
կամքով շարունակէին իրանց գործը մի քանի տարի
շարունակ, որպէս մի յայտնի պրինցիպի տէր մար-
դիկ, մինչև ընտելացնէին մեր հասարակութեանը
«ընթերցարանի» կրթողական նշանակութեան և
նրա անհրաժեշտութեան զարգացման հետ: Այս ի
հարկէ մեր հասարակութեան մէջ մի բանիմաց, մի
բաւականին զարգացած փոքրածաւալ տարր, որ
միշտ իմանում է գնահատել և քաջալերել ըստ
կարելոյն, այսպիսի հասարակային կրթողական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄԱՅԻ ՄԵԼԻՔՈՎԻՆԵՐԸ

ՎԵՐՋԱՐԱՆ

Խամայի մէլիքութիւնների պատմութիւնը վեր-
ջացաւ: Երբ այդ պատմութիւնը մաս-մաս լոյս էր
տեսնում «Մշակի» համարների մէջ, ամեն ան-
գամ, երբ հանդիպում էի ծանօթներին, նրանց ա-
ռաջին խօսքը լինում էր՝ «լաւ է...» իսկ յետոյ
մի հարց՝ «արտեղից էք առել այդ տեղեկութիւն-
ները»...

Այդ հարցի մէջ, որ ստեղծ առաջարկում էին
ինձ, նշմարվում էր մի տեսակ կասկած, մի տե-
սանում «Մշակի» համարների մէջ, ամեն ան-
գամ, երբ հանդիպում էի ծանօթներին, նրանց ա-
ռաջին խօսքը լինում էր՝ «լաւ է...» իսկ յետոյ
մի հարց՝ «արտեղից էք առել այդ տեղեկութիւն-
ները»...

Այդ մարդիկը, որոնք վաղի բեւեռագրների
վրա դատողութիւններ են անում, որոնք ցըրհե-
հեղան անցքերի վրա են խօսում, զարմանալի
է, որ իրանց թթի տակ, մեղանից կէս դար ա-
ռաջ կատարված իրողութիւնների վրա նայում են
իբրեւ առասպել, իբրեւ ֆանտազիայի ծնունդ:

Իմ ընթերցողների կասկածը փարատելու հա-
մար ևս հարկաւոր եմ համարում ցոյց տալ այն
աղբիւրները, որոնցից քաղել եմ իմ պատմու-
թիւնը:

Գեո 1881 թվի յուլիս ամսին, նախ քան իմ
հանապարհորդութիւնը դէպի Սիւննաք աշխարհը,
«Մշակի» համարներից մէկում ևս տպեցի մի յօդ-
ուած, որի մէջ բացատրում էի իմ ճանապարհոր-
դութեան նպատակը, այն է՝ հաւաքել Ղարաբաղի
մէլիքների պատմութեան համար թէ՛ զրաւոր և թէ՛
բերանացի տեղեկութիւններ, — և հրաւիրում էի
ձեռնհաս անձինքներին օգնել ինձ իմ ձեռնար-
կութեան մէջ, եթէ գտնվում էին նրանց մօտ որ
և իցէ պատմական նիւթեր:

Որպէս մեր ամեն այդ տեսակ հրաւերները մը-
նում են սպարդիւն, իմ հրաւերը ևս մի առան-
ձին հետեւեցի չը հասաւ: Ինձ մնում էր անձամբ

գնալ Ղարաբաղ, մտնել ամբարի մէջ, և դիմել
այն հարուստ պատմական աղբիւրին, որը դեռ
ևս թարմ կերպով պահպանված է ժողովրդական
աւանդութիւնների մէջ:

Եւ անցայ Ղարաբաղի հինգ գաւառները, որ
կազմում էին խամայի հինգ մէլիքութիւնների
իշխանութեան տեղերը:

Գանձակից գնացի Գիւլիստանի գաւառը: Այս-
տեղ են Մէլիք-Բէկաբանների կառուածները,
այստեղ տիրում էին նրանց նախնիքը: Ղարա-
Չինար գիւղում, մի ամբողջ շարքով մնալով Մե-
լիք-Բէկաբան Սէրգէյ-բէկ և Ալեքսանդր-բէկ եղ-
բայրների տանը, տեղային ծերունիները գտնում ու
գալիս էին ինձ մօտ, ողբերկած պատմում էին
իրանց երկրի մէլիքների պատմութիւնը: Եւ գը-
րում էի: Յետոյ սկսեցի ճանապարհորդել Գիւլիս-
տանի գաւառան տեղերը, այլ և այլ իշխատակա-
րաները քննելու համար: Տեսայ Մէլիք-Բէկա-
բանների տոհմային գերեզմանատունը՝ Հօնիկի
վանքի մօտ, մի ամայի, անմարդաբնակ տեղում,
մթին անտառի մէջ, և դարերով աճած թուփերի,
մացառների մէջ գտայ այդ տոհմի հերոսների մո-
ռացված շիրմները: Մեծ դժուարութեամբ յաջող-
վեցաւ ինձ կարգաւ մամուսպատ տապանաքարերի
արձանագրութիւնները, որոնք ժամանակագրական
և տոհմագրական կողմից պատմութեան համար նը-
շանակութիւն ունէին: Հէնց նոյն վանքի մօտ
գեո կանգնած է մի հոյակապ, սիւնադարձ ամ-
բող, բարձր աշտարակներով, բազմաթիւ սենեակ-
ներով, որոնց մէջ մի ժամանակ բնակվում էին
Մէլիք-Բէկաբանների նախնիքը: Տեսայ և Գիւ-
լիստանի առեւիկը բերդը, որ իր կիսաւեր դրու-
թեան մէջ դարձեալ հրաշալի է: Գիւլիստան գաւ-
տեղով, քննում էի եկեղեցիներում կամ մասնաւոր
անձինքների մօտ գտնված գրաւոր մատենաների
իշխատակարանները, քննում էի եկեղեցիների կամ
վանքերի պատերի վրա գտնված արձանագրու-
թիւնները: Գանձասարի վանքի պատի վրա մի
ընդարձակ արձանագրութիւն նուիրված է Մէլիք-
Բէկաբանների իշխատակցին:

Գիւլիստանից անցայ Ջրաբերդի գաւառը: Այս-
տեղ հաւաքեցի այն աւանդութիւնները, որ պահ-
պանված էին Մէլիք-Խորայեղեանների մասին: Գե-
տաշէն գիւղի եկեղեցում գտայ մի գեղեցիկ գրա-
ւոր ակետարան *), արձան է կազմով, որի վրա
տակարանի մէջ արձանագրված էր Մէլիք-Խորա-
յեղեանների տոհմագրութիւնը: Թարթար գետի
հակառակ ընթացքով դէպի վեր բարձրանալով,
ամեն քայլում հանդիսանում էին Մէլիք-Խորայե-
ղեանների իշխատակարանները: Եւ այցելութիւն
գործեցի Նիւիէ առաքելաւ ամայի վանքին, որ
գտնվում է բոլորովին կուտակած անտառների
խորքում, սարսափելի լեռների բարձրավանդակի
վրա: Դա վանք չէ, այլ վանքերի մի խումբ է:
Վանքի քան ութն տասնհինգ կանգնած են մի-
մեանց մօտ, այնքան մերձ, որ մի մարդ հազիւ
կարող է նրանց մէջտեղից անցնել: Այդ տասն-
հինգից մէկը մէջ գրած է Վալական թագաւորի
գերեզմանը, իսկ նրա դառն հանգիւյ գտայ Ջրա-
բերդի հօր տիրապետողի՝ Մէլիք-Աթա մեծի
փառաւոր շիրմը: Այդ վանքում տեսայ այն աշ-
տարակը, որի մէջ բնակվում էր իմ պատմութեան
հերոսներից մէկը՝ երեւի Գալի-Մահմադ (Աւագ
վարդապետը): Աշտարակի վերին յարկի միջից
այժմ աճել է մի ահալին կարնի ծառ: Մատաղիս
գիւղից ինձ հետ վեր առած ուղեղոյցը, որը այն
առեւիկ լեռների և անտառների համարձակ որ-
սորդներից մէկն էր, առանց լռելու պատմում էր
ինձ Գալի-Մահմադի գործերը: Վարդապետ-հե-
րոսի քաջագործութիւնները արձագանք էին գտել
երկրաստորի տպաւորվող սրտում:

Նիւիէ առաքելաւ վանքից անցայ Նիւիւնիւնի
վանքը: Այդ վանքի մօտ գտնվում է Ջրաբերդ
կոչված հաշակաւոր ամրոցը, որ և կոչվում է Ջեբ-
մուլի բերդ: Այդ բերդի միջից փառնել ժամանակ
կանց վանքում մնացի մի օր: Ներսէսի Տօնի-ա-
պէրը, միակ միաբանը այն վանքի, որի մէջ մի

գիր ակետարան *), արձան է կազմով, որի վրա
տակարանի մէջ արձանագրված էր Մէլիք-Խորա-
յեղեանների տոհմագրութիւնը: Թարթար գետի
հակառակ ընթացքով դէպի վեր բարձրանալով,
ամեն քայլում հանդիսանում էին Մէլիք-Խորայե-
ղեանների իշխատակարանները: Եւ այցելութիւն
գործեցի Նիւիէ առաքելաւ ամայի վանքին, որ
գտնվում է բոլորովին կուտակած անտառների
խորքում, սարսափելի լեռների բարձրավանդակի
վրա: Դա վանք չէ, այլ վանքերի մի խումբ է:
Վանքի քան ութն տասնհինգ կանգնած են մի-
մեանց մօտ, այնքան մերձ, որ մի մարդ հազիւ
կարող է նրանց մէջտեղից անցնել: Այդ տասն-
հինգից մէկը մէջ գրած է Վալական թագաւորի
գերեզմանը, իսկ նրա դառն հանգիւյ գտայ Ջրա-
բերդի հօր տիրապետողի՝ Մէլիք-Աթա մեծի
փառաւոր շիրմը: Այդ վանքում տեսայ այն աշ-
տարակը, որի մէջ բնակվում էր իմ պատմութեան
հերոսներից մէկը՝ երեւի Գալի-Մահմադ (Աւագ
վարդապետը): Աշտարակի վերին յարկի միջից
այժմ աճել է մի ահալին կարնի ծառ: Մատաղիս
գիւղից ինձ հետ վեր առած ուղեղոյցը, որը այն
առեւիկ լեռների և անտառների համարձակ որ-
սորդներից մէկն էր, առանց լռելու պատմում էր
ինձ Գալի-Մահմադի գործերը: Վարդապետ-հե-
րոսի քաջագործութիւնները արձագանք էին գտել
երկրաստորի տպաւորվող սրտում:

Նիւիէ առաքելաւ վանքից անցայ Նիւիւնիւնի
վանքը: Այդ վանքի մօտ գտնվում է Ջրաբերդ
կոչված հաշակաւոր ամրոցը, որ և կոչվում է Ջեբ-
մուլի բերդ: Այդ բերդի միջից փառնել ժամանակ
կանց վանքում մնացի մի օր: Ներսէսի Տօնի-ա-
պէրը, միակ միաբանը այն վանքի, որի մէջ մի

ժամանակ կաթողիկոսներ էին նստում, ամբողջ
գիշերը պատմում էր ինձ Չաղաղան իւզդաշու և
Մէլիք-Խորայեղեանների տոհմի գանազան ներկա-
յացուցիչների մասին, և զարմանում էր, որ նրա
պատմածներին այնքան նշանակութիւն էին տա-
լիս, որ գրի էին առնում:

Նիւիւնիւնի վանքից ոչ այնքան հեռու, Թար-
թար գետի աջ ափերի մօտ, մի անտառապատ
ձորի մէջ գտնվում են աներակները մի հին քա-
ղաքի, որի տեղը մինչև այսօր կոչվում է «Մայ-
րաքաղաք» կամ «Քաղաքառեղ»: Այստեղ տեսայ
Մէլիք-Աթա մեծի կիսաւեր պալատը, որ իր փո-
շիների մէջ զարձաւ հրաշալի է: Իսկ Նոր Մոխ-
րաթաղ գիւղի մօտ, խնամատեղ անապատի
հանդէպ տեսայ Մէլիք-Աթա մեծի ամրոցը, որ
բոլորովին ամբողջութեամբ մնացած է: Գոնեւրի
ճակատների վրա կան երկար արձանագրութիւն-
ներ, որոնք պատմական նշանակութիւն ունեն:

Այստեղից ևս յառկապէս գնացի Մարդաբերդ
անունով գիւղը մի մօտ հարիւրամաս ծերունի
տեսնելու համար, որի մասին առաջուց լսած էի:
Նրան կոչում են Միրզա-Ասիւր, հիւստ է հայերէն,
պարսկերէն, արաբերէն և թուրքերէն իզուցներ
զարգիտութեան մէջ, մի ժամանակ թագաւորի
պաշտօն է կատարել Շուշի բերդի վերջին իշ-
խողներին՝ Խորհրդի-խանի և Մէլիք-խանի մօտ, իսկ
մի ժամանակ ծառայել է նոյն բերդում գտնված
գերմանացի միսիօնարների մօտ: Այդ կենդանի
պատմագրութիւնը երկու ամբողջ օր ինձ գրել էր
տալիս Ղարաբաղի մէլիքների և Շուշիի խաների
անցքերը, որոնք նրա իշխողութեան մէջ խիստ
անմոռաց կերպով պահպանված էին: Զառամեալ
ծերունին երկաթի նման ուրախանում էր, որ
վերջապէս գտնվեցաւ մի մարդ, որին հաղորդեց
իր սրտին մօտ եղած տեղեկութիւնները: Ինքը
գրելու անընդունակ էր դարձել. աչքերը չէին
տեսնում, իսկ ձեռքերը դողում էին: Նա տուեց
ինձ մի հնամաշ տետրակ (թղթիթիւրից պակաս)
որի մէջ կային զանազան ժամանակագրական
նկատողութիւններ Ղարաբաղի նշանաւոր անցքե-
րի մասին: Մարդաբերդից անցնելով Կոսպատ
գիւղը, այստեղ տեղեկութիւններ հաւաքեցի Աթա-
բէկանների մասին: Յետոյ գնացի Գիւլիսթաղ
բերդը, որ պատկանում էր Մէլիք-Ալի-Սափրեանե-

*) Այդ ակետարանը մի ժամանակ գրելի ընկած
լինելով Պարսկաստան, Մէլիք-Աթա մեծը թա-
փել է գիւղից: Իսկ, և գրել է տուել նրա վեր-
ջին թղթիթիւրի վրա իր տոհմի իշխատակարանը:
Այդ գիւղը հայկական արհեստի ամենագեղեցիկ
դործերից մէկը կարելի է համարել. արձան է կազ-
մում այնպիսի հրաշալի քանդակներ ունի, մագա-
մը այնքան նուրբ է, պատկերները այնքան
կենդանի են և զրելը այնքան կանոնաւոր է, որ
կարող է ամենաշահաւոր թանգարանի զարդը
լինի:

(ԿՐ Հարունակյի)

լաւ գոյնեղով մի կտոր է: Այդ ապրիլեւմի կտորը հարկուր անգամ լաւ է, մեր կարծիքով, քան թէ ապրիլեւմի այն ասիական կերպաները, որոնք ծախվում են առհասարակ թիֆլիսում: Այդպիսիները գործվածները գերազանցում են իրանց պնդութեամբ, թեթեւութեամբ և հիւսուածքի հաւասարութեամբ: Այդպիսիներն ենք ցանկանում պարտնիս իր սկսած գործի մէջ: Շատ լաւ կը լինէր որ պարտնը ունենար թիֆլիսում իր գործվածներին մի պահեստ: Այստեղ մեր տիկիները այդ ապրիլեւմի կերպաներից շատ կանուխէին, քանի որ այդ աղտոյնները կարող էին ծառայել որպէս կանանց գլխարկների և կանանց զգեստների դարձեր:

ԲՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են: «Յուլիսի 20-ին այստեղ բնակվող մի թուրք ճարտարագետ կամ ինժեներ, ցանկութեամբ յայտնեց տեղական նահանգապետին քրիստոնէական հաւատն ընդունելու: Թողտուութեամբ ստանալով, ամսին 26-ին այդ պարտնը իր ցանկութեամբ միջոցառեալ տեղիս հայոց եկեղեցուս:

Նոյն տեղից մեզ գրում են: «Յուլիսի 24-ին երկրորդան ժամը 9-ին, Կօրսիկա կղզուց եկած քուրճայիսարեանի մի ֆրանսիացի պ. Ֆ. Կ. անձնասպանութեան գործից ատրճանակով: Ասում են որ անձնասպանութեան պատճառը նրաթական նեղ դրութիւնն էր:»

Պ. Խ. Մայրուստանց խնդրում է մեզ տպել հետեւեալը: «Նորդեմ յարգող պարտններից, որոնց մօտ գտնվում են Ներսիսապոլի Զայնի բաժանորդագրութեան թերթերը, շարունակեն գործը և առ այժմ չուղարկեն ինձ թերթերը, ինչպէս առաջ որոշել էի, ըստ որում սխալ աշխատանքըս մինչև սկզբից որոշած ժամանակը լոյս չէ կարող տեսնել ինձանից անկախ պատճառով: Առանձնապէս կը յայտնեմ տպագրութեան ժամանակը և իմ հասցեն:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՊԻՍ

Ուղիղ մի շարքի առաջ Կաղապար յայտնեց համայնքների ժողովին, որ նա յուլիսի 24-ին կառավարի վաւերացնել արաքայ կարգի կրեդիտը թաղուհու ցամաքային և ծովային զօրքերը ուժեղացնելու, այսինքն եզրկտոսի մէջ պատերազմական գործողութիւնների ծախսերը ծածկելու համար, գրում է «Годосъ» լրագրի թղթակիցը Լօնդօնից յուլիսի 27-ից: Մի և նոյն ժամանակ առաջին միտքստը աւելացրեց, որ պարլամենտի ընդդիմադրական կուսակցութիւնը առիթ կունենայ վիճարանութիւններ սկսել կառավարութեան եզրկտոսական քաղաքականութեան մասին: Հասկանալի է, որ ընդդիմադրական կուսակցութիւնը ձեռքից չը թողնեց այդպիսի ցանկալի դէպքը: Արաքայ կարգի կրեդիտի մասին վիճարանութիւնները դեռ շարունակվում են և երեկ այսօր երեկոյեան կը վերջանան: Ձը նայելով Կաղապարի խնդիրներին, վիճարանութիւնների աւելի շուտ վերջացնելը անկարելի եղաւ: Կարելի է հաւատացած լինել, որ բացի աննշան փոքրամասնութիւնից, որ կազմված է իրլանդական պատգամաւորներէից և մի քանիներից, որոնք կամենում են խաղաղութիւն պահպանել, ինչ որ էլ պատահի, համայնքների ամբողջ ժողովը կը քուէարկէ յօգուտ կառավարչական առաջարկութեան: Գեռ մի քանի օր առաջ կարելի էր նախատեսել, որ ժողովի 150 անդամներից կառավարչական այդ առաջարկութեան դէմ կը քուէարկէին միայն 50 կամ 60 պատգամաւորներ: Իմ հաւաքած վերջին տեղեկութիւնների համեմատ հաւանական փոքրամասնութիւնը աւելի է,

աննշան է լինելու: «Daily News» լրագրի տեղեկութիւնների համեմատ միայն անգլիական 9 ազատամիտներ և իրլանդական 20 ավտօնօմիտներ կը քուէարկէին կառավարութեան պահանջած արաքայ կարգի կրեդիտի դէմ: Նթէ այժմ պարլամենտը արձակվել և նոր ընտրութիւններ նշանակվելն, այդ 9 ազատամիտներից հազիւ թէ մէկը նորից ընտրվելու ձգնարիտ է, եզրկտոսական հարցը շատ չէ վերափոխւում ազգաբնակչութեանը, բայց ամենքը համոզված են, որ եզրկտոսի լաւ կառավարութիւնը կենսական նշանակութիւն ունի անգլիական շահերի համար Հնդկաստանի և Արևելքի մէջ: Անգլիական ազգաբնակչութիւնը հասկանում է, որ այդպիսի կառավարութիւնը անկարելի է, քանի որ եզրկտոսի մէջ զինուորական ապստամբութիւններ են պատահում, որոնք հարուած են հասցնում օրինաւոր կարգերին: Անգլիացիք անհրաժեշտ են համարում միջոցներ գործադրել այդ անխելամուտութիւնը ոչնչացնելու համար: Գօշն պարլամենտի մէջ արտասանած ճառով մի քանի ապացոյցներ բերեց, որոնք ցոյց էին տալիս եզրկտոսական անկարգութիւնների ճնշման անհրաժեշտութիւնը: Նա մատնացրեց եղաւ, որ կոտորածի երկիւղին զինուորական անելը ամենակորստաբեր ազդեցութիւն կունենայ գերիներ ռուստի ճնշման, Արևելքի Բուլղարիայի վարչական վերանորոգութիւնների և թիւրքաց չայաստանի քրիստոնէայ բնակիչների դրութեան վրա: Մինչդեռ Արաքի-փաշա և նրա կողմնակիցները մտադիր են ներգործել Անգլիայի և ֆրանցիս Եւրօպայի վրա կոտորածի երկիւղով:

Ամեն բանից երևում է, որ Անգլիան չէ ինայելու ոչ մի տեսակ զոհաբերութիւն իր նպատակին հասնելու համար:

ԹԻԻՐԵԻՍ

«Politische Correspondenz» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հետեւեալ տեղեկութիւններ է հաղորդում: Բոլոր թիւրքերը և այստեղի քաղաքագէտները համոզված են որ Անգլիան ձգտում է ձեռք բերել Եւրօպայի վրա հովանաւորութեան կատարելա իրաւունքը: Թիւրքերը խեղդիվն արդէն դաւաճան են համարում, տեսնելով որ նա Արաքի-փաշայի հետ չը միացաւ և չը տեղափոխվեցաւ Կայիրէ, ասելով որ ամբողջ եզրկտոսը միացաւ Արաքի-փաշայի հետ, իսկ խեղդիվը իր եղբայրներից թողված չըրջապատված է միայն անգլիացիներով: Այդ բոլորը ի նկատի ունենալով չը պետք է զարմանալ որ Անգլիան թիւրքերի միջամտութիւնը այն պայմանով է միայն ընդունում, եթէ նա Արաքի-փաշային ապստամբ կը յայտնէ: Սուլթանի այդ պահանջը անիրադրժեք է թվում և դեռ յայտնի չէ թէ կը յաջողվի արեւօք միտքստներին համոզել նրան այդ քայլն անելու: Բացի այդ կետից կան և ուրիշ պայմաններ, որոնք խոչընդոտ են լինում անգլո-թիւրքաց համեմատ զործողութեանը: Թիւրքիան կամենում է եզրկտոսում գործել եթէ ոչ իբրեւ առաջին ձայն ունեցող պետութիւն, գոնէ հաւասար իրաւունքով Անգլիայի հետ, այն ինչ անգլիացիք նրան հաւասար իրաւունքներ չեն ուզում տալ, այլ ընդունում են նրան իբրեւ իրանց օգնական, իրանց ստորադրեալ: Թիւրքաց շրջաններում նրանով են միայն իրանց միլիթարում, որ Անգլիան առանձնացած է և հաւատացած են որ ուրիշ պետութիւնները իրանց անբաւականութիւնը կը յայտնեն անգլիացիներին

խնդրազուրկ վարմունքի համար: Նայելով գործի այժմեան դրութեանը, հազիւ թէ Անգլիան ձգտում լինի եզրկտոսի վրա տիրապետել, բայց եթէ վերջ ի վերջոյ հանգամանքները նրան այդ տեղ հասցնեն, դժուար է հաւատալ որ միւս պետութիւնները թիւրքերի կողմը պահեն և խիստ ընդդիմադրութիւն ցոյց տան Անգլիային: Թիւրքաց քաղաքագէտներից շատերը ի հարկէ կասկածանքով են վերաբերվում դէպի այդ տեսակ երազներ և դրանցից մի քանիները, մինչև անգամ կարծում են, որ Անգլիան իր նիւթական կորուստը վերջ ի վերջոյ թիւրքերից կը պահանջէ, բայց մեծամասնութիւնը համոզված է որ եզրկտոսը կուսածաղիկ է դառնալու Անգլիայի և Եւրօպայի մէջ: Հասարակաց կարծիքը այժմ աւելի յուզված է քան երբեք, կարծում են որ քրիստոնէաների ջարդերը շատ տեղերում կարող են պատահել և առանց որ և իցէ հիմունքի Պօլսում լուր է տարածված որ կոնֆերենցիան արձակված կը լինի և որ պետութիւնների մէջ անբաւականութիւններ առաջ կը գնան: Մի խօսքով ամեն տեսակ տարօրինակ լուրեր են տարածվում և ի նկատի ունենալով մահմեդականների յուզված գրութիւնը, պետական մարդիկ բոլոր ոյժերը պետք է գործ դնեն այդքան խոչընդոտների առաջն առնել կարողանալու համար: Թիւրքաց զօրքի արշաւանքի հարցը օրից օր կորցնում է իր ժողովրդականութիւնը և թիւրքերի ուղեւորութիւնը դէպի Արաքի-փաշան աւելանում: Արաքի-փաշայի եզրկտոսին տուած բոլոր փնտնելը ամբոխի աշքում ոչինչ են երևում համեմատելով եւրօպացիների ճնշման դէմ նրա յարուցած ընդդիմադրութեան գաղափարի հետ: Մինչև անգամ ուսումնասիրական պատերազմի ժամանակ մահմեդականների ազգային զգացմունքը այն աստիճան յուզված չէր, ինչպէս այժմ, մահաւանդ երբ Կ. Պօլսում նպատակաւոր լուրեր են տարածվում Արաքի-փաշայի արած մասնաւոր յաղթութիւնների մասին: Թիւրքիան պաշտօնապէս հերքեց այն լուրը իբր թէ Արաքի-փաշան Սուլթանին յայտնած լինէր որ կընդդիմադրէ թիւրքաց զօրքերին: Թիւրքաց զօրքի արշաւանքը յետաձգվում է, չը նայելով որ Բ. Կրանը որոշ ժամանակամիջոց էր տուած այդ պատրաստութիւնն աւելու: Ուրիշ կողմից լուր կայ թէ Սուլթանի և Սերիայի վերաբերական հրամանատարներին զօրքերը պատրաստելու հրահանգներ տուած են արդէն: Նմանապատեթիւնը այդ հրահանգները կատարելու համար 10,000 լիրա է պահանջել, բայց դեռ ևս ձեռքում ոչինչ փող չունի: Արշաւանքի համար նշանակված զօրքի հրամանատար լինելու է Կերիլի-փաշա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

«Իշթերի գործակալութեանը» Ալեքսանդրիայից, յուլիսի 24-ից հեռագրում են: Անգլիացիները յարձակվեցան Արաքի փաշայի առաջաւոր զօրքերի վրա մի քանի թնդանօթներով Բամբէ մօտ, Մահմուդիէ ջրանցքի և Կայիրէի երկաթուղու մէջ գտնվող տարածութեան մէջ: Անգլիացիները գործեցին յարձակմունքը երկէ կողմերից: Միւս աւաւօտը Արաքի փաշան ուղարկեց անգլիական բանակը 14 մարդ զինադարձ խնդրելով: Բանակցութիւնները ոչինչ հետեանքին չը հասան:

Նոյն տեղից, նոյն գործակալութեանը հեռագրում են յուլիսի 26-ից, որ անգլիացիների յարձակման հետեանքն այն էր, որ եզրկտոսական զօրքերը յետ մղվեցան իրանց բոլոր առաջաւոր դիրքերից: Արաքի փաշայի թնդանօթները ստիպվեցան լուր անգլիացիների ռմբակոծութեան պատճառով: Անգլիացիները մեծ աշողութիւն ունեցան,

թէ և կորուստներ էլ կրեցին: Անգլիացիների ձեռքն ընկած զօրքի եզրկտոսները ասում են որ Արաքի զօրքերը ճակատամարտի ժամանակ մեծ կորուստներ կրեցին:

«Միջազգային հեռագրական ընկերութեանը» Լօնդօնից հեռագրում են յուլիսի 21-ին: Համայնքների ժողովում Գայտէն յայտնեց կառավարութեան կողմից, որ նա դեռ ոչ մի հաստատութիւն չէ ստացել այն լուրի մասին, իբր թէ բրիտանական զօրքերը ջարդվել են և փախել են պատերազմի դաշտից:

Կ. Պօլսից հեռագրում են յուլիսի 21-ին Բ. Կրան յայտադրել, որպէս պատասխան Կիւֆէրինի յուլիսի 30-ի հաղորդութեան, Անգլիայի յայտնութեան վերաբերութեամբ, որ նա կամենում է կարգը վերականգնելուց յետոյ դիմել պետութիւններին ապագայում լաւ կառավարութիւն հաստատելու համար եզրկտոսում, թիւրքիան արդէն խնդրել է պետութիւնների գործակցութիւնը, իսկ Արաքիին ապստամբ հրատարակող չըվաբերականի մասին յայտադրել մէջ առված է, որ Բ. Կրանը կընդունի այդպիսի չըվաբերականը միայն այն դէպքում, երբ նա կը հրատարակվի այն ժամանակ, երբ թիւրքաց զօրքերը արդէն եզրկտոս կը լինեն: Վերջապահութեան մէջ Բ. Կրանը հրամայում է իր դիտանքներին կատարեալ համաձայնութեամբ գործել պետութիւնների հետ:

Կ. Պօլսից հեռագրում են յուլիսի 22-ին: Կոնֆերենցիայի երկվայ նիստում Կիւֆէրին քաղաքագրութիւններ տուեց Անգլիայի գործողութիւնների վերաբերութեամբ: Ալեքսանդրիայում: Ամբողջութեամբ գրաւված են Անգլիայի ինքնապաշտպանութեան համար: Անգլիայի միակ նպատակն է վերականգնել հանգստութիւնը և խաղաղութիւնը, հաստատել լողալու ազատութիւնը Սուէզի ջրանցքի վրա, խեղդիվի հեղինակութեանը ուժ վերադարձնել, գործողութեան կատարեալ ապստամբութիւն պահպանելով, դէպի որը կարող էին հարկադրել անցքերը, Անգլիան ցանկանում է ընդունել իւրաքանչիւր պետութեան գործակցութիւնը: Մինչը ընդունում ենք նոյնպէս սուլթանի բարեկամական գործակցութիւնը և ուրախ ենք, որ ազատվեցանք անպատեթիւնից սուլթանի դիտաւորութիւնների վերաբերութեամբ: Բայց մինչ այնու ամենայնիւ պահանջում ենք չըվաբերականի հրատարակումը յօգուտ խեղդիվի, որի մէջ Արաքի-փաշա ապստամբ հրատարակված լինի: Թիւրքաց ներկայացուցիչները յայտնեցին, որ անհիմն է թիւրքաց անգործունէութեան մասին պնդելը, որովհետեւ Բ. Կրանը միաձայն յայտադրեց յետոյ պատրաստակամութեան յայտնեց մասնակցել կոնֆերենցիային և վճռեց զօրքեր ուղարկել եզրկտոս: Այդ քաղաքագրութիւններով բաւականացան պետութիւնները:

«Times» լրագիրը կարծում է, որ եթէ սուլթանը մտածում է, թէ չէ կարող չըվաբերական հրատարակել, այն ժամանակ նա աւելի լաւ կանէր զօրքեր չուղարկել: Թիւրքերի նշանակութիւնը գրանով աւելի քիչ կը փնտալի, քան թէ երբ նա անբաւականութիւն կունենայ Անգլիայի հետ, որ կարող է նրա իշխանութեան համար ճակատագրական լինել:

Լրագիրներին Կ. Պօլսից հեռագրում են յուլիսի 22-ին: Լօրդ Կիւֆէրին Բ. Կրանը մի նոր յայտադրել ներկայացրեց, որ մէջ խօստանքն պահանջում է չըվաբերական հրատարակել Արաքի-փաշայի դէմ: Կապառակ դէպքում թիւրքաց զօրքերի առի իշխելը չի կայանայ: Կիւֆէրին յոյս է յայտնում, որ չըվաբերական կը հրատարակվի մինչև կամ զօրքերի հասնելու բռնկին: Այսօր երկրորդան և վաղը առաւօտը եզրկտոս կուղեւորվին մի քանի շոգենաւեր 1,800 մարդկանցով և պատերազմական պաշարով: Հինգշաբթի, Վօլսէյ հեծելազօր զվարդիայի գորաբաժնի հետ միասին եզրկտոս դնաց «Calabria» նաւի վրա:

«Իշթերի ընկերութեանը» հաստատ աղբիւրներից հաղորդում են, որ Ռուսաստանը կրկին համաձայնվեցաւ կոնֆերենցիային մասնակցել Անգլիայի հանգստացուցիչ քաղաքագրութիւններից յետոյ: Ռուսաց վերջին չըվաբերականի մէջ առված էր, որ Ռուսաստանը, թէպէտ և չահր չունէ եզրկտոսում, բայց կոնֆերենցիային մասնակցելու հրաւերը ընդունեց եւրօպական խաղաղութիւնը պահպանելու համար: Նոյն բռնկից, երբ սկսվեցաւ Անգլիայի գործողութիւնը կոնֆերենցիայից դուրս, Ռուսաստանը հիմը ունէր բաժանվել կոնֆերենցիայից: Երբ պ. Սնո ինքնուրեքն այդ վճռի մասին Անգլիային, նա մի և նոյն ժամանակ յայտնեց թիւրքիային, որ Ռուսաստան

նը դէպի նա բարեկամական համակրութիւն ունի: Այդ բանին Բ. Գրան ներկայացուցիչները կարծիք յայտնեցին, որ Ռուսաստանը այդ բարեկամութիւնը աւելի լաւ կ'ապացուցանէր, յայտնելով, որ մնում է, և չէ հրաժարվում կոնֆլիկտային: — Լոնդոնից հեռագրում են յուլիսի 22-ին: Երեկոյան թերթերը հաղորդում են, որ Սուէզը երկէ զբաւեցին անգլիացիները:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յուլիսի: Օգոստոսի 1-ին Մոսկովայի մէջ կը կայանայ անտառապետների և անտառային արդիւնաբերութեամբ պարագործների ժողովը: Տեղային և Պոլսոյի մէջ կ'ուղարկեն ճանապարհի վրա նոր փոս դրոշմաւ: «Օրէնքների ժողովածուի» մէջ տպւած են հետեւեալ հրահանգները, որոնք տուած են ներքին գործերի մինիստրի բարձր ղեկավարութեամբ պետական պոլիցիան կառավարող մինիստրի օգնականին: Նրան անմիջապէս ենթարկւած են պետական պոլիցիայի բաժինը, Ս. Պետերբուրգի օբեր-պոլիցմէյստերը, իրեն պետական յանցանքների առաջն առնող և ոչնչացնող պատասխանատու կառավարչին: Նոյն ձեւով նրան ենթարկւում են և միւս օբեր-պոլիցմէյստերները: Նրա իրաւասութեան տակ են նոյնպէս պետական յանցանքների կաշնաւորութեան բոլոր տեղերը: Պետական պոլիցիայի գործերի վերաբերութեամբ նա անմիջական յարաբերութիւններ ունի կառավարչական բոլոր հիմնարկութիւնների հետ: Նոյն «Օրէնքների ժողովածուի» մէջ տպւած են նոր կանոններ բանկերի մէջ գրաւ դրած և ժամանակին մուտքը չը ներկայացրած անշարժ կայքերի աճուրդով ծախելու մասին և կանոններ բաշխիչների ազատ հողերի վաճառման մասին, որոնց կարելի է ծախել միայն գանձարանին կամ գեղական հասարակութիւններին:

ՓԱՐԻՑ, 30 յուլիսի: Պատգամաւորների ժողովի և սենատի պարագործները դադարեցրած են:

Կ. ՊՈԼԻՍ, 30 յուլիսի: Սուլթանը հրատարակեց իրագէ, որով Արարի-փաշա ապստամբ է յայտնված: «Заря» լրագիրը հաղորդում է, որ չեքոսլովակական իշխանը իր երկրի մէջ ապստամբված հերցեգովիցներին յայտնեց, որ անկարող է նրանց պահել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յուլիսի: «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ «Русский Курьеръ» լրագիր խմբագիր Լանինի առողջութիւնը վտանգաւոր դրութեան մէջ է: Օտարների դատարանը սուտ մատուցեցին համար դատապարտեց երեք անձանց, մէկին՝ զրկել իրաւունքներից և բնակեցնել Սիբիրի մէջ, միւսին՝ բնակեցնել իրկուտսկի նահանգի մէջ և երկու տարի կալանաւորել: Երրորդին՝ կալանաւորել երկու տարի և վեց ամիս: Բողոքող գանգատը սենատը թողեց առանց հետևանքների: «Новое Время» լրագրի հաղորդութեան համեմատ, Սվետոնիցկի յայտնում է լրագիրների մէջ, թէ ինքն յարձակեցաւ «Русский Курьеръ» լրագրի խմբագրի վրա, որովհետեւ այդ լրագիրը բամբասանքով նրան անձնական վիրաւորանք հասցրեց և հրաժարվեցաւ տպել հերցեգով: Սվետոնիցկի կուկուսկայա բաժնի կառավարիչ չէր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 94 ռ. 25 1/2 կ., երկրորդ 90 ռ. 25 1/2 կ., երրորդ 90 ռ. 50 1/2 կ., չորրորդ 90 ռ. 12 1/2

կ., հինգերորդ 90 ռ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսեր արժէ 213 ռ. 57 1/2 կ., երկրորդ 212 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 89 ռ. 50 1/2 կ., երկրորդ 89 ռ. 37 1/2 կ., երրորդ 89 ռ. 62 կ., ոսկի 8 ռ. 23 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,06 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 50 պֆ., փարիզի վրա արժէ 252 ֆրանկ 75 սանտիմ: Բորսայի տրամադրութիւնը ամուր է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 օգոստոսի: «Մոսկովայի» նաւապետը հաղորդում է, որ նաւը, նրա բեռը և իրեղենները կորան, բայց մարդիկ բոլորն էլ ապառաժ են և հասել են Ազեն: Երէկ դատարանը վճռեց Նիգովցովի սպանողին հանքերի մէջ տաժանակիր աշխատանքների ենթարկել 20 տարով:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

КЕЛЕРСКАЯ
УКСУСНАЯ ЭСSENция

10—50

ԹԷՅ առաջին հունձի այս տարի չափազանց զգնաւոր և հոտաւետ: Այդ թէյից ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ 40ՆԳՕ թէյ 1 ռ.—1 ռ. 20 կօպ., պատուական ՍԱՆՅԱ թէյ 1 ռ. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ռ. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ. 50 կ., գեղեցիկ ԿԱՅՍԱՆԻ թէյ 1 ռ. 80 կ. և ամենալաւ ֆուլ-լու-ֆու թէյ 2 ռ. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկամթ ՄԱՀԱԿԱՆՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկամթ ԳՐԻՉՆԵՐ աւել բողջ Անդրկովկասի համար, շօխուդ ֆրոյ, Շեկիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԴԱՌԻ, ԲԵՎՈԼՎԵՆԵՐ վերել, ԹԱՄԲԵՐ Բարներելի, ԿՈՒՄԱՆԻ Նըշըշույ, ԱԼԲՈՒՆԵՐ Շփալի կէս գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՑՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100:

14—100

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՆՈՐ ԳՐԿՈՅԿ

ՍՐԻՆԳ ՀՈՎՈՒԱԿԱՆ

ԵՐԿԵՐ, ՈՏԱՆԱՐՈՒՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ
Ընթերցասէր մանուկների համար
ՏԱՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄԱՐԱՆՈՒՄ

ԳՐԵՑ Գ. ԱՂԱՅԱՆՑ

Վաճառվում է Վ. Շահվերդեանի Լրագրական խանութում: Գինն է 20 կօպ. օտար տեղերից գինում են հետեւեալ հասցեով: Թիֆլիս, ԵՄ ԳԱՅԵՏՈՒ ԱԳԵՆՏՏՎՈ Բ. Սաւերդով:

3—25

ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօրծկնակի պրօպակտի վրա, առեն ճարտարապետ Բէլօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տոներէրց:

ՂՈՒՐԱՅԻ Հոգեւոր Եկեղեցիի դպրոցի համար առաջիկայ Սեպտեմբերից հարկաւոր է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, ինչ առաւիպից և կամենայ: Ցանկացող թող պայմաններն առաջարկէ Ղուբայի ԳՊՐՈՅԻ ՀՈՒՐԱՐԱՆՈՒԹԵԱՆԸ: 1—3

ЕЖЕНЕДЕЛЬНЫЙ ЖУРНАЛ
„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРЕНИЕ“

ИЗДАВАЕМЫЙ ВЪ Г. ТИФЛИСѢ
(ГОДЪ ВТОРОЙ)
Открыта полугодическая подписка на журналъ съ 1 июля 1882 г. по 1 января 1883 года. Цѣна за полгода 6 руб.

Кромѣ того можно подписаться на 3 мѣсяца 3 р. 20 к., на 1 мѣсяцъ 1 р. 20 к. Подписка принимается съ 1 числа каждаго мѣсяца и не даѣе конца года.

Полугодовые подписчики могутъ вносить при подпискѣ 3 р. и черезъ мѣсяцъ еще 3 руб.

Подписка принимается въ г. Тифлисѣ въ администраціи журнала Соловаская улица д. № 10 и въ Москвѣ и въ С.-Петербургѣ въ книжныхъ магазинахъ Н. П. Анисимова.

2—10

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ անդամակցութեան ՏՈՄՍԱԿ ցանկացողները կարող են ստանալ Ռուսացական Ժողովի ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ, որ գտնվում է Պ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՑՈՒՄ № 170:

Ի. Ա. ՄԷԼԻԳԲԷԳԼԵԱՐՕՎԻ ՄԱՍՆԱԽՈՐ ԲԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆԻ ՄԷՋ (Թիֆլիս, Բարոսկայա փողոց, տուն Կարակով № 10): ԼԻՍՑՈՒՑԻՉ և սկզբնական ԳԸՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ կը սկսվեն օգոստոսի 23-ից, իսկ ՈՒՍՈՒՄԸ սեպտեմբերի 1-ից:

1—3 (1)

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդեն Մանգլիսում է ապրում, յանձն է առնում պարագլի երեխաների հետ՝ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հետեւեալ հասցեով: Մանգլիս, Գաբրիէլ Միրզօւն, ԵՄ ՐՈՇԷ, ԴԱՇԱ ՄԱՐՔԻ ՏԻՄՈՖԵՅՈՎ:

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ԿԷՍԻՑ

ԿԸ ՍԿՍԻ ՀՐԱՏԱՐԱԿ ԵՒ ՎԻԷՆԱՅՈՒՄ

L'ORIENT

ՖՐԱՆՍՆԵՐԷՆ ԹԵՐԲԵՐ, ԱՄՍԻՐ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

«L'Orient» (Արեւելք) թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ: Գրվել կարելի է «ՄՇԱԿԻ» խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիենայում գինեւոր Հետեւալ հասարակ հասցեով: Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

ՄԻՋԻ ԲՈՂՈՑ, ԿԱԹՕԼԻԿԵԱԿԱՅԱ ԲՈՂՈՑԻ ԱՆԿԻՆ Ն. 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամենաին տեսակ, ֆրանսիական և անգլիական երկամթ ԿՐԱՎԱՔՆԵՐ 8—30 ռ., չամբաններ 250—25 ռ., սակիջաթներ 1. 30—12 ռ., սոււն դոսկներ ճանապարհի 6—35 ռ., մարաններ (погребны) 6—25 ռ., սամօ վարներ 60 կ.—1.25 ֆունտը, կուկունի պինձէ ամաններ, Գերմանիայի երկամթ էմալով ամաններ. ուսմի վալնիկներ մրամօրնի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լույսի 6—32 ռ., ուկրաիններ ամենայն տեսակ 3. 50—30 ռ., պարաններ (գուլաններ) թէթովերի, սիգար Ռենդարդի ֆարերից, պապիրուս և թամբալու կուկունովի գրվել պապիրուգի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուլար չայու և կաֆէր) ԷՆԷՄԻ, կօֆէ ԷՆԷՄԻ և ՄԻԼԵԼՅՈՒՆ. Պետերբուրգը 40—1 ռ. 25 կ. հայկիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ռ., պրորկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դուլթուկ (пучъ), պարաններ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆարերիկների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուլթուկ, գրչակիթներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դանակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուկունի 1—40 մինչև 3—20 կ. պրորբու, միս կարելու մաշիկայ. Անգլիական ուլթուկ, Բրիտանիկ չայնիներ, կաֆէի-նիկներ ամենայն տեսակ, Չաղացներ կաֆէի համար, ֆիլտր—Չուր մաքրելու, կրախմով կարթիկն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, Թուղթ փղախ, կանվերտներ, սուրճուկ, մատիտ, գրչի երկամթ, գրչակիթ, քարեապատակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիկներ, գրչակի սեղանի և չայու ֆրամէ, վաքչակի և բրիտանիկ դուլթուկ 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չուլթուկ 45 կ.—5 ռ., շամբաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. Չուլթու, պրեսպապիկներ վաքչակու, Ռենդարդի ԿԱԼՕՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կանանց և մարդիկանց 15 կ.—50 կ. Չուլթու, չայնիներ, մարդիկանց գալուստիկներ, գոնախիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրիկ և չաքի. սանդղեր շիրմայու ոսկորէ, գուլապիլովի և փայտէ, չուլթաններ գլխի, շոթի, սապոկի, պրի և կարտի համար. չուլթի թէյ (бумага) մատուկի կօճի և շալէ (гарусъ) ֆէշապէ, մարդիկանց և կանանց, պրոմաններ, քիտաներ, պապիրուսի ամաններ և մանր գոլանտերիկի պարաններ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ., կտոր, հոտավետ ջրեր, պուգրա, Գլիցերին ջրի քաղախ, հոտավետ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցրելու ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԻՆ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ ԿԱՀՏԵՈՒՄԸ (ԵՄ ՏԿԼԱԴՅ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարազգայացիք կարող են դիմել հետեւեալ հասցեով. Թիֆլիս Մի-խաիլ Ն. Թեր-Նիկոցօսու.

105—180

ՄԻՋԻ ԲՈՂՈՑ, ԿԱԹՕԼԻԿԵԱԿԱՅԱ ԲՈՂՈՑԻ ԱՆԿԻՆ Ն. 13.